ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմության ընթացքում հայության որոշ հատվածներ այլևայլ պատճառներով ենթարկվել են բռնի կրոնափոխության, դավանափոխության: Հատկապես Օսմանյան կայսրության՝ այս ուղղությամբ վարած հետևողական քաղաքականության հետևանքով ներկայումս Թուրքիայում գոյություն ունեն բռնի իսլամացված հայության և նրանց հետնորդների խմբեր: Կասկածից վեր է, որ հայության դավանափոխ և կրոնափոխ խմբերի ուսումնասիրությունն այսօր հայագիտության առաջնային խնդիրներից է և կարևորվում է նաև Հայության անվտանգության տեսանկյունից: Հաշվի առնելով Հայության աշխարհասփյուռ լինելու հանգամանքը՝ ուսումնասիրությունների ժամանակ արդյունավետ միջոց կարող է լինել տեղեկատվական ցանցային համակարգի գործածումը:

Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայության խնդիրները վերջին տարիներին է հայտնվել մեր գիտական, հասարակական շրջանակների օրակարգում: Հայաստանում թեմայի համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ հետևողական աշխատանքներ է վարում «Նորավանք» ԳԿՀ-ն՝ համագործակցելով նաև շահագրգիռ կազմակերպությունների, հիմնարկների և անձանց հետ:

Թուրքիայի բռնի կրոնափոխ հայության խնդիրը բազմաշերտ է և պահանջում է համապատասխան վերաբերմունք: Կարելի է ասել, որ պայմանականորեն իսլամացված հայություն անվանված տարբեր խմբերի հանդեպ մենք պետք է ունենանք տարբեր վերաբերմունք և, որ ամենակարևորն է, սպասումներ: Նրանց մեջ կան ծպտյալ քրիստոնյա հայեր, իսկ իսլամացված հայերի և նրանց խառնածին հետնորդների մի մասը հպարտանում է իր հայկական արմատներով և առանձնահատուկ վերաբերմունք սկսում ցուցաբերել դրան, մի մասը փորձում է անտեսել այդ հանգամանքը, որպեսզի հասարակության մեջ չարժանանա գյա-

վուր, թշնամի հայի որակման, իսկ մի մասն ունի, նաև հոգեբանական պատճառներով պայմանավորված, թշնամական վերաբերմունք հայության քրիստոնյա հատվածի հանդեպ։ Այս ամենով հանդերձ, մենք պետք է գիտակցենք, որ ունենք մշակութային, լեզվական, կրոնական առումով տարբեր մի զանգված, որն ունի հայկական արմատներ և, որ ամենկարևորն է, հետաքրքրվում է իր արմատներով, փորձում ճանաչել ինքն իրեն։

Սույն ժողովածուն «Նորավանք» հիմնադրամի՝ կրոնափոխ հայության թեմայի ուսումնասիրության ուղղությամբ կատարվող հերթական քայլերից է։ Ժողովածուում ընդգրկելով տարբեր մասնագետների հոդվածներ՝ համեստ փորձ ենք կատարել պատկերել Թուրքիայի հայության տարբեր խմբերի արդի վիճակի որոշ առանձնահատկություններ։

Ռուբեն Մելքոնյան